ԿԱՐԾԻՔ

ԴԻԱՆԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: ՀՀ տնտեսությունը, լինելով փոքր և բաց, խիստ զգայուն է աշխարհում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ, ինչը դրսևորվում է ինչպես տնտեսական աճի, այնպես էլ անկման ժամանակահատվածներում: ՀՀ տնտեսության համար բնութագրական է գլոբալ տնտեսական պարբերաշրջանի աճի փուլում համաշխարհային տնտեսության աճի տեմպերը գերազանցող աճը, իսկ անկման փուլում՝ ավելի խոր անկումը: Այս երևույթը բնորոշ է ոչ միայն ՀՀ-ին: Զարգացող երկրների տատանումները սրում են արտաքին ֆինանսական հոսքերը, իսկ մակրոտնտեսական քաղաքականությամբ դրանց արդյունավետորեն հակազդել սովորաբար չի հաջողվում, ավելին՝ մակրոտնտեսական քաղաքականությունն իր հերթին հաճախ դառնում է տատանումները սրող գործոն:

Նման իրավիճակը հատկապես կարևոր է դարձնում մակրոտնտեսական քաղաքականության համարժեք և ժամանակին արձագանքը տնտեսության խոցելիությունների կուտակմանը:

Այստեղ ընդգծված անհրաժեշտություն են դառնում նաև արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների համակարգման, դրանց փոխառնչությունների գնահատման խնդիրները:

Վերոնշյալն ընդգծում է Հայաստանի արտաքին առևտրային քաղաքականության հիմնախնդիրների և երկրում վարվող մակրոտնտեսական քաղաքականության ներդաշնակեցման ակնհայտ կարևորությունը, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի ***արդիականությունն ու անհրաժեշտությունը:***

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության առաջին՝ «Արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցության տեսական և մեթոդաբանական հիմնադրույթները» գլխում հեղինակը ներկայացրել է արտաքին առևտրի դինամիկան և կանխատեսման տեսամեթոդական դրույթները, մակրոտնտեսական ցուցանիշների համակարգը և ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան, արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների համակարգի փոխկախվածության տեսական դրույթները, համապարփակ ձևով քննարկել է ՀՀ տնտեսական քաղաքականությունը:

Այս համատեքստում կառուցվել և գնահատվել է ՀՀ տնտեսության թվայնացման մակարդակը բնութագրող համաթվի դինամիկան բնութագրող մոդել, որի հիման վրա կատարվել են ենթադրություններ: Ներկայացվել են նաև արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխկախվածության մասին տարբեր տեսություններ, վերլուծության և գնահատման մոտեցումներ:

Ատենախոսության երկրորդ՝ «Արտաքին առևտուրը որպես Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների մակրոտնտեսական կայունության գործոն» գլխում, ներկայացվել են Եվրասիական տնտեսական միության մակրոտնտեսական քաղաքականությունը, ԵԱՏՄ արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցության վերլուծությունը, ՀՀ արտաքին առևտրի վրա ԵԱՏՄ անդամակ-

ցության էֆեկտի գնահատումը: Այդ նպատակով հաշվարկվել են բազիսային (մինչև ԵԱՏՄ-ին անդամակցելը) ժամանակաշրջանի համար մի քանի ինդեքսներ՝ գնային և ծավալային կազմով՝ առևտրի ծավալների փոփոխություն, առևտրի պայմանների փոփոխություն, դրանք էքստապոլացվել են և համադրվել փաստացի (ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո) ժամանակաշրջանի արժեքների հետ՝ դիֆերենցիալը ցույց տալու նպատակով:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության փոխազդեցության գնահատականը» գլխում, ներկայացվել են ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկախվածության գնահատականները, ինչպես նաև իրականացվել է արտաքին առևտրի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա շոկերի ազդեցության մոդելավորում:

Ըստ հեղինակի եզրահանգման՝ առավելագույն ՀՆԱ ունենալու համար պետք է մակրոտնտեսական քաղաքականության համակարգումը լինի խթանող բյուջետային և դրամավարկային, սակայն առաջինի դեպքում սահմանափակված ենք պարտաքային բեռով, իսկ 2-րդի դեպքում՝ գնաճի նպատակային ցուցանիշով: Անհրաժեշտություն է առաջանում քաղաքականությունների զուգորդման, հակառակ ազդեցության կամ հաջորդական կիրառման մեխանիզմների մշակման: Ցանկացած պարագայում միայն մեկ քաղաքականության գործիքի անընդհատ կիրառումն անընդունելի է: Ստացվում է, որ սկզբնական շրջանում արտաքին առևտրի խթանման քաղաքականությունը պետք է զուգորդվի չափավոր բյուջետային հատկացումներով (ծառայությունների առևտրի խթանում), իսկ ստացված օպտիմալ մակարդակից ավելի արտարժույթն ուղղել պարտքի սպասարկմանը և արժութային պահուստին: Հաջորդ կետում, արդեն ունենալով պարտքային ավելի ցածր բեռ՝ խթանող բյուջետային քաղաքականության միջոցով նպաստել արտահանում իրականացնող արտադրությունների ինքնաբավ ցիկլ ունենալուն:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հաշվարկվել է ՀՀ տնտեսության՝ արտաքին առևտրից կախվածության գործակիցը, կառուցվել են գործոնային ռեգրեսիոն մոդելներ և դրանց հիման վրա կատարվել է էլաստիկության վերլուծություն, հաշվարկվել են ԵԱՏՄ-ում աշխատանքի, կապիտալի և ՀՆԱ էլաստիկության գործակիցները և դուրս են բերվել առևտրաշրջանառություն-կապիտալ ու առևտրաշրջանառություն-աշխատանք քրոսս-էլաստիկության գործակիցները, գնահատվել է ՀՀ արտաքին առևտրի վրա ԵԱՏՄ անդամակցության ազդեցությունը, իրականացրել է առևտրային հաշվեկշռի կանխատեսում, IS-LM-BP մոդելի միջոցով գնահատվել է ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխկախվածությունը:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների ներդաշնակեցման առավել հրատապ հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների համակարգումն ապահովող ծրագրերի իրատեսականությանը, այդ քաղաքականությունների բարելավմանը և արտաքին տնտեսական հարաբերությունների ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Ներածությունում հիմնավորված չէ այն փաստը, որ երկրորդ գլուխը նվիրված է ԵԱՏՄ-ին, նույնիսկ եթե Հայաստանը ԵԱՏՄ անդամ պետություն է:
2. Որևէ կերպ չի ընկալվում 2007-2009 թթ. ճգնաժամի ազդեցության գնահատումը որպես նորույթ դիտարկելը, առավել ևս, որ այդ ժամանակ ԵԱՏՄ-ն չկար, ի՞նչ ԵԱՏՄ առևտրաշրջանառության մասին է խոսքը:
3. Քննարկման ենթակա է այն հարցը, արդյո՞ք պետք է առաջին գլխում ներկայացնել ՀՀ համապատասխան ցուցանիշների դինամիկան, հետո անդրադառնալ արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածության տեսական հիմքերին: Կարծում ենք, սկզբից պետք է ներկայացվեին տեսական հիմքերը:
4. Ինտեգրման տեսական, ճանաչողական ասպեկտները (2.1. ենթագլուխ) տեղին չեն, քանի որ խոսքը կոնկրետ պետք է վերաբերի ԵԱՏՄ-ին: Առավել ևս, արտաքին առևտրաշրջանառության և մակրոտնտեսական ցուցանիշների փոխառնչությունները հեղինակը չի դիտարկում:
5. Ատենախոսության 3.1. ենթագլխում հեղինակը ներկայացրել է արտաքին առևտրի վրա մի շարք շոկերի ազդեցությունը, սակայն մակրոտնտեսական ցուցանիշների հետ փոխառնչության վերաբերյալ խնդիրը չի քննարկվել:
6. Կարծում ենք, առաջարկությունների և մեխանիզմների առաջադրման մասը որոշ չափով թույլ է ներկայացվում, հասցեականությունը բավականին մշուշոտ է: Եզրակացությունների մեջ մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ ճանաչողական բնույթի նյութերը հիմնավոր չեն:
7. Բացառությամբ IS-LM-BP մոդելի և վերջինիս մեկնաբանությունների, ընդհանուր առմամբ, հեղինակը քիչ է ներկայացնում արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխառնչության խնդիրները:

8. Ատենախոսությունում բացակայում է միջազգային փորձը: Արդյո՞ք դա անհրաժեշտ չէր համաշխարհային թրենդներն ընկալելու և հնարավոր դրականը վերցնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետությունում արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների նպատակայնության բարձրացման, զարգացող երկրներում այդ խնդիրների լուծմանը և զարգացմանն ուղղված քաղաքականությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Դ. Մաթևոսյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների կատարելագործման, մասնավորապես՝ տնտեսության զարգացման շրջանակներում այդ քաղաքականությունների համակարգման հարցերով զբաղվող մարմինների գործունեության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, «ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
01.07.2024 թ. **Ն.ՊԱՐԲԻՆՅԱՆ**